ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 18 հունիսի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի
Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Սվետլանա Օհանյանի
անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Սվետլանա Օհանյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 2015 թվականի հունիսի 8-ին)՝ խնդրելով. «… աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը, ՀՀ քաղ. դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 3-րդ մասը և 231-րդ հոդվածի 4-րդ մասը ճանաչել հակասահմանադրական»:

Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 14.1, 18 և 19-րդ հոդվածներին:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով և ելնելով խնդրո առարկա անհատական դիմումի և կից փաստաթղթերի նախնական ուսումնասի-

ության արդյունքներից՝ գտնում ենք, որ դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

- խնդրո առարկա անհատական դիմումով վիճարկվող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով առաջադրված հարցի վերաբերյալ առկա է ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 11-ի ՍԴՈ-991 որոշումը, ինչը, որպես գործի քննությունը մերժելու հիմք, ամրագրված է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով.

- խնդրո առարկա անհատական դիմումով վիճարկվող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 3-րդ մասով և 231-րդ հոդվածի 4-րդ մասով առաջադրված հարցերի վերաբերյալ առկա է ՀՀ սահմանադրական դատարանի 2015 թվականի հունիսի 16-ի ՍԴՈ-1220 որոշումը, ինչը, որպես գործի քննությունը մերժելու հիմք, ամրագրված է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Սվետլանա Օհանյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

18 հունիսի 2015 թվականի
ՍԴԳԿՈ/ 1-18